

**Դրամաշնորհային աջակցություն Մարդկային անվտանգության ծրագրերի  
համար ՖՏ 2018**

**Վայոց Ձորի դպրոցներին դպրոցական գույքի տրամադրման ծրագրի ավարտի  
արարողությունը**

2020 թ. սեպտեմբերի 4-ին Վայոց Ձորի մարզի Ազատելի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ «Վայոց Ձորի դպրոցներին դպրոցական գույքի տրամադրման ծրագրի» 67,694 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, Վայոց Ձորի մարզպետ պարոն Արարատ Գրիգորյանը, Վայոց Ձորի թեմի առաջնորդ, Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, Վայոց Ձորի մարզպետի տեղակալ, տիկին Նանե Ասատրյանը, Վայոց Ձորի՝ կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, պարոն Արփիար Ղազարյանը, ՀՀ ԱԱԾ Վայոց Ձորի ՄՎ պետ Կոլյա Միքայելյանը, «<Զարգացում և բարեկեցություն>> հասարակական կազմակերպության նախագահ, տիկին Գայանե Գևորգյանը և շատ ուրիշներ, որոնց թվում էին նաև դպրոցի աշխատակազմը և ուսանողները:

Ծրագրի նպատակն է տրամադրել նոր դպրոցական գույք, մասնավորապես նստարաններ և աթոռներ, Վայոց Ձորի մարզի ընտրված 19 տարրական և միջնակարգ դպրոցներին, որոնք օգնության շատ մեծ կարիք ունեն և նախկինում որևէ գործընկերի կողմից օժանդակություն չեն ստացել: Արդյունքում, 2300 աշակերտ և 570 ուսուցիչ օգուտ կքաղեն այս ծրագրի շրջանակներում տրամադրված նոր դպրոցական գույքից:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ տիկին Գևորգյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը իրենց ներդրման և վստահության համար, որի շնորհիվ «<Զարգացում և բարեկեցություն>> հասարակական կազմակերպությունը հաջողությամբ ավարտել է Արագածոտնի, Տավուշի, Արմավիրի և Արարատի մարզերում դպրոցական գույքի տրամադրումը՝ Ճապոնիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Իր հերթին դեսպան Յամադան շեշտեց, որ տվյալ օժանդակությունը մեկն է այն քայլերից, որոնց միջոցով ցուցաբերվում է Ճապոնիայի շարունակական աջակցությունը առողջ կրթական միջավայրի ստեղծման և պահպանման գործում յուրաքանչյուր մակարդակի վրա:

Վայոց Ձորի մարզպետ պարոն Գրիգորյանը շնորհակալությունը հայտնեց այս ծրագրում ներգրավված բոլոր կողմերին և արտահայտեց իր պատրաստակամությունը՝ շարունակելու նման ծրագրերի իրականացումը Վայոց Ձորի դպրոցներում:

Արարողության վերջում դպրոցի տնօրեն պարոն Ղազարյանը դպրոցի բոլոր ուսանողների, նրանց ծնողների և աշխատակազմի անունից երախտագիտության իր խոսքն արտահայտեց դեսպան Յամադային և Ճապոնիայի կառավարությանը նման բացառիկ հնարավորության համար:



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Վայոց Ձորի մարզպետ, պարոն Գրիգորյանի շնորհավորական ուղերձը



<<Զարգացում և բարեկեցություն>> ՀԿ-ի նախագահ, տիկին Գևորգյանի ողջույնի խոսքը



Կահավորված դասասենյակներից մեկը



Ագատեկի միջնակարգ դպրոցին տրամադրված նոր դպրոցական գույքը



Աշակերտները աղ ու հացով դիմավորեցին դեսպան Յամադային



Դեսպան Յամադայի քաղաքավարության այցը Վայոց Ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին



Դեսպան Յամադան և Վայոց Ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը